«ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"NORTH-SOUTH ROAD CORRIDOR INVESTMENT PROGRAM IMPLEMENTATION ORGANIZATION" STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Թումանյան 38
Հեռ. (374 60) 50 68 70, 50 68 71
38 Tumanyan Str.,Yerevan 0002, Republic of Armenia
Tel. (374 60) 50 68 70, 50 68 71

N 429

«08» 05 2014

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ԻՐԱՎԱԲԱՆ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան 30.04.2014թ. թիվ 217-ի 4 հարցման, տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի (ՊՈԱԿ) թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթներին ընտրված են ճանաչվել հետևյալ մասնակիցները՝

| Պաշտոնի անվանումը | Ընտրված մասնակից *(տեղեկատվությունը տրամադրվում է նշված անձանց համաձայնությամբ)* |
|---|---|
| Տրանսպորտային ոլորտի ինժեներ/ Տնտեսագետ | Տիգրան Ավագյան |
| Ավագ տեղամասային ինժեներ | Ռոբերտ Մելքոնյան |
| Տեղամասային ինժեներ | Արթուր Սանոյան |
| Գնումների և պայմանագրերի կառավարման ղեկավար | Կարինե Աբրահամյան |
| Գնումների մասնագետ | Կարեն Առուստամյան |
| Պայմանագրերի կառավարման մասնագետ | Մասնագիտական հարցազրույցի փուլ |
| Ֆինանսատնտեսական ղեկավար/Գլխավոր հաշվապահ | Սերգեյ Մելիք-Յոլչյան (0.5 դրույք)<br>Նարինե Միքայելյան (0.5 դրույք) |
| Հաշվապահական հաշվարման և վճարումների | Վլադիմիր Աթյան (0.5 դրույք) |
| Իրավական հարաբերությունների խորհրդատու/ Գլխավոր իրավաբան | Մասնագիտական հարցազրույցի փուլ |
| Բողոքների և վեճերի կառավարման մասնագետ | Բաղեյան Մարիամ (0.5 դրույք)<br>Հովսեփյան Նելլի (0.5 դրույք) |
| Կարողությունների զարգացման , մոնիթորինգի և արտաքին կապերի ղեկավար | Կարեն Ջեյրանյան |

Այս պահի դրությամբ չհամալրված թափուր պաշտոնների ընտրության ընթացքը գտնվում է մասնագիտական հարցազրույցի փուլում, ուստի նշված պաշտոնների համար ընտրված մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը ՊՈԱԿ-ը դեռևս չի տնօրինում:

Ինչ վերաբերում է հարցման 2-րդ կետի ներքո պահանջվող տեղեկատվությանը, ապա տեղեկացնում ենք, որ համաձայն «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների, հայցվող տեղեկատվությունը խորհրդապահական տեղեկատվություն է, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների համաձայն՝ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ **առանց աշխատողի գրավոր համաձայնության**, աշխատողի անձնական տվյալներն ստացող անձանց նախազգուշացնել և պահանջել հավաստում, որ այդ տվյալները կարող են օգտագործվել միայն այն նպատակներով, որոնց համար **աշխատողները տեղեկացված են**: Միաժամանակ աշխատողն իրավունք ունի ստանալու ամբողջական տեղեկատվություն իր անձնական տվյալների և դրանց մշակման վերաբերյալ:

Վերոհիշյալ պահանջները պահպանելու և համապատասխան աշխատողների (ընտրված մասնակիցների) գրավոր համաձայնությունը ստանալու, ինչպես նաև աշխատողներին իրենց կենսագրական տվյալների (CV) մշակման (տվյալների հավաքման, փոխանցման, օգտագործման և այլն) նպատակների մասին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու նպատակով, խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել հայցվող տեղեկատվության օգտագործման նպատակների (այդ թվում՝ հանրամատչելի աղբյուրներում դրանց հնարավոր հրապարակման) մասին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Ք.Ղալեչյան
Հեռ.060506870/71